ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 12 » դեկտեմբերի 2023թ. № **140-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՈՒ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 111-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով և 13-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Սպիտակ համայնքի սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2.Հաստատել Սպիտակ համայնքի աղբահանության իրականացման կարգը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3.ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի 2023 թվականի սանիտարական մաքրման սխեման ու աղբահանության իրականացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ապիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 15-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 111-Ա որոշումը:

ԿՈՂՄ (19) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ